ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 սեպտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

138
(2618)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 102

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ՝ սեպտեմբերի 29-ին՝ կառավարության նիստի ժամանակ, մեծագույն ուրախությամբ տեղեկացրեց, որ Հայաստանը վերջապես կկարողանա զենք ձեռք բերել: Ինչու վերջապես՝ որովհետեւ, ըստ իր ներկայացրածի, պատերազմից հետո Հայաստանը թեեւ փող ուներ, բայց զենք ձեռք բերել չէր կարողանում: Նրա ասածը Ազգային ժողովի իր իսկ թիմակից, պաշտպանության նախկին փոխնախարար Գագիկ Մելքոնյանն է հաստատել, թե Ռուսաստանը 44-օրյա պատերազմից ի վեր Հայաստանին զենք չի մատակարարել: Ավելին՝ վստահեցրել էր, որ վերջին ժամանակներս ՀՀ-ի զինբազան ՌԴ-ի կողմից համալրվել է միայն մեկ դաշույնով, որ Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն էր նվիրել Հայաստանի պաշտոնակցին: Իրականությունը, սակայն, պարզվում է, բնավ ՔՊ-ականների ներկայացրածով չէ: Այսպես, ըստ Պաշտպանության նախարարության՝ այս տարվա հունվարի 25-ին տարածած հաղորդագրության՝ ՀՀ զինված ուժերը համալրվել են նոր ուղղաթիռներով: ՊՆ կայքէջում հրապարակմանը կցված լուսանկարներից պարզ է դառնում, որ խոսքը ռուսական արտադրության Մu-8-ՄՏՎ ուղղաթիռների մասին է, որոնք Մu-8 ուղղաթիռների արդիականացված տարբերակներից են: Ռուսաստանը, փաստորեն, 44-օրյա պատերազմից հետո Հայաստանին ռազմական նշանակության ուղղաթիռ վաճառել է: Բացի ուղղաթիռից, պատերազմից հետո ՌԴ-ի կողմից Հայաստանին զենք մատակարարելու մասին խոսել է նաեւ ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն, որ վերոնշյալ դաշույնը նվիրելու ժամանակ ասել էր. «Կարող ենք համարել, որ Հայաստանին սպառազինության մատակարարման գործընթացը մեկնարկած է»: Ի՞նչ է ստացվում. Փաշինյանի հայտարարությունը, թե՝ «փող ունենք, բայց մեզ զենք չեն վաճառում», հերթական սուտն է:

Ֆրանսիան աշխատում է, որպեսզի ամբողջ միջազգային հասարակությունը ճիշտ գնահատի եւ մատնանշի, թե ով է ագրեսորը: Երեկ Գեղարքունիքի մարզ այցի ժամանակ՝ «Ժողովուրդ» օրաթերթի հարցին պատասխանելիս, նշեց ՀՀ ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Անն Լյույոնը: «Այստեղ իրավիճակն իսկապես լուրջ է, եւ Ֆրանսիան ու ԱՄՆ-ն հատկապես աշխատում են այս ուղղությամբ, որպեսզի մյուս երկրներն էլ ակտիվանան: Հատկապես մենք լուռ չենք, մենք ասել ենք, թե ով է ագրեսորը: Հուսով ենք՝ մյուս երկրներն էլ կտեսնեն, եւ այս իմաստով այս այցն իսկապես կարեւոր է»: Մեր հարցին՝ Նիկոլ Փաշինյանը նշել է, թե միջազգային դիտորդական առաքելության տեղակայումն ադրբեջանական օկուպացիայից տուժած հայկական տարածքներում եւ սահմանամերձ շրջաններում բացարձակ անհրաժեշտություն է, նա ինչ է մտածում, դեսպանը նշեց. «Մենք աջակցում ենք այդ գաղափարին, աշխատում ենք այդ ուղղությամբ, բանակցում ենք այլ երկրների հետ»:



«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ պաշտպանության նախարարությանն ու Ազգային անվտանգության ծառայությանը հարցումներ էր ուղարկել՝ պարզելու, թե ինչ եղավ «հակառակորդի՝ Հայաստան ներթափանցած 1-2 խմբերի» ճակատագիրը: Այդ մասին, հիշեցնենք, դեռեւս սեպտեմբերի 16-ին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն էր հայտարարել Հանրայինի եթերում: ՀՀ պաշտպանական ու անվտանգային գերատեսչություններին խնդրել էինք հստակեցնել, թե արդյոք հայտնաբերվել ու վնասազերծվել են այդ խմբերը, եւ եթե այո, ապա որտեղ են այժմ նրանք պահվում: Վերոնշյալ երկու կառույցները, սակայն, ըստ երեւույթին խուսափելով կոնկրետ ու հասցեական արձագանքից, հորդորել են ԱԺ մամուլի քարտուղարի՝ սեպտեմբերի 17-ին ներկայացրած պարզաբանմամբ բավարարվել, որտեղ վերջինս ասում է, թե Ալեն Սիմոնյանը վերաձեւակերպել ու լրացրել է ԳՇ պետի ասածները: Մի կողմ թողնելով, թե ինչ են ասել կամ հայտարարել ԱԺ նախագահն ու այնուհետ նրա մամուլի քարտուղարը՝ արձանագրենք, որ զինված խմբերի ներթափանցման ու դրանից բխող բոլոր տեսակի հետեւանքների համար պատասխանատու երկու գերատեսչությունները կամ թերացել են, եւ այդ զինված խմբերը դեռ ՀՀ-ում են, կամ, ամենայն հավանականությամբ, ԱԺ նախագահի՝ տագնապ առաջացնող հայտարարության մասով կաշկանդված են հասցեական գնահատականներ տալ:

ՀՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ոչ մի կերպ չմեկնաբանեց հարցը՝ կա արդյոք արգելք Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանին զենք վաճառելու հարցում: Ինչպես հայտնի է, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ հարձակման օրերին՝ սեպտեմբերի 13-ին՝ խորհրդարանում, երեկ էլ ՀՀ կառավարության նիստում խոսեց Հայաստանի՝ զենք ձեռք բերելու խնդիրների մասին: Նա ասաց, որ անգամ դաշնակիցները զենքի մասով իրենց խոստումները չեն կատարում: Ըստ նրա՝ թեեւ Հայաստանը բավարար ֆինանսական միջոցներ ունի, բայց ոչ բոլորն են, որ պատրաստ են մեզ զենք վաճառել: Ասել է թե՝ փող ունենք, բայց զենք առնել չենք կարողանում: «Մենք կարող ենք արձանագրել, որ ՀՀ-ն այսօր ունի բոլոր ֆինանսական հնարավորությունները՝ ձեռք բերելու իրեն անհրաժեշտ պաշտպանական զենք-զինամթերքը, բայց, բնականաբար, ոչ բոլոր երկրներն են, որ պատրաստ են զենք վաճառել ՀՀ-ին»: Վարչապետի այս հայտարարության մասով ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինից հետաքրքրվեցինք՝ արդյոք ՌԴ ն թույլ չի տալիս, որ Հայաստանը զենք գնի: Նա սկզբում նշեց. «Ես իրավասու չեմ պատասխանել այդ հարցին»: Մեր ճշտող հարցին՝ ո՛չ հերքում է, ո՛չ հաստատում, փաստորեն, նա նշեց. «Առանց մեկնաբանության»:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

«ՌԴ-ԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՆՔ»

Վերջին ժամանակաշրջանում բավական ակտիվորեն խոսվում է ՀԱՊԿ-ից դուրս գալու ու Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններին հրաժեշտ տալու մասին: Ռուսաստանին «հրաժեշտ տալու» ցանկություն ունեցողները, սակայն, մոռանում են, որ Հայաստանը, բացի քաղաքական ու ռազմավարական կաղերից, ՌԴ-ի հետ նաեւ տնտեսական ակտիվ կաղեր ունի: Թեմայի վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է տնտեսագետ Սուրեն Պարսյանի հետ:

-Պարոն Պարսյան, այսօր հասարակության մի ստվար զանգված խոսում է Ռուսաստանի հետ կապերը խզելու, ՀԱՊԿ-ի հետ անդամակցությունը դադարեցնելու եւ հայացքը դեպի Արեւմուտք ուղղելու մասին, բայց որեւէ մեկի մտքով չի անցնում, թե դա Հայաստանի վրա ինչ կարող է արժենալ տնտեսական առումով: Եթե հաշվարկելու կամ թվարկելու լինենք այն տնտեսական վտանգները, որոնք կարող են գալ Ռուսաստանից, ապա դրանք ի՞նչ տեսք կունենան:

-Հայաստանը Ռուսաստանի հետ ոչ միայն ռազմական, քաղաքական սերտ կապեր ունի, այլ նաեւ տնտեսական: Հիշեցնեմ, որ Հայաստանը 2014թ-ից հանդիսանում է ԵԱՏՄ անդամ երկիր: Մինչեւ այդ Հայաստանը կնքել է մի շարք տնտեսական պայմանագրեր Ռուսաստանի հետ՝ ազատ առեւտրի, մաքսային եւ այլ պայմանագրեր: Այդ ամենն իր ազդեցությունն է թողել մեր առեւտրային շրջանառության վրա: Ռուսաստանը մեր թիվ 1 առեւտրի կենտրոնն է: Նշեմ, որ այս տարի՝7 ամիսների ընթացքում, արտահանումը դեպի Ռուսաստան կազմում է 762 միլիոն դոլար, նախորդ տարվա համեմատ արտահանումը վելացել է շուրջ 70 տոկոսով: Բացի այդ, Ռուսաստանը հանդիսանում է արտաքին տրանսվերտների կարեւոր երկիր, այնտեղից է գալիս Հայաստան եկող գումարների մեծ մասը: Ռուսաստանից հայաստան է եկել շուրջ մեկուկես միլիարդ դոլար, որը, անցած տարվա համեմատ, կրկնակի ավելի շատ է: Այս ամենը հիմք է, որ հասկանանք, որ Հայաստանի տնտեսությունը մեծ կախվածություն ունի ռուսական կողմից եկող դրամական հոսքերից: Այս դրամական օգնությունները եթե չլինեն, ապա Հայաստանը լուրջ ֆինանսական խնդիրներ կունենա: ԵԱՏՄ-ը անդամ լինելով՝ Հայաստանը ունի GSP, GSP+ համաձայնագրեր, ազատ առեւտրի իրավունք մի շարք արեւմտյան երկրների հետ:

-Կպարզաբանե՞ք՝ որոնք են GSP, GSP+ համաձայնագրերը, որ Հայաստանն ունի ԵԱՏՄ անդամ երկրների հետ:

-Ի դեպ, Հայաստանը միակ երկիրն է, որ ունի նման համաձայնագիր, որը թույլ է տալիս, որ Հայաստանը դառնա կամուրջ տնտեսական առումով, այսինքն՝ Հայաստանից կարող ենք ապրանք արտահանել եւ ԵՄ, եւ Ռուսաստանի Դաշնություն: Հայաստանի համար կարեւոր է նաեւ տնտեսական շարժը, այսինքն՝ միգրացիայի հարցը: Բոլորի համար գաղտնիք չի, որ բազմաթիվ հայեր մեկնում են այնտեղ աշխատանքի եւ անգամ իրենց ընտանիքներն են տեղափոխում տվյալ երկիր, եւ, փաստորեն, Ռուսաստանի տնտեսական իրավիճակը ազդում է նաեւ Հայաստանի բնակչության եւ ընտանիքների կենսամակարդակի, բարեկեցության ցուցանիշների մակարդակի վրա: Ռուսաստանը մեզ համար նաեւ էներգակիր հումքի երկիր է: Հայաստանը գազ է ներկրում Ռուսաստանի Դաշնությունից ներքին սպառման համար տարեկան 2 միլիարդ դոլարի չափով: Սահմանի վրա մենք գազի համար վճարում ենք 175 ԱՄՆ դոլար 1000 խորանարդ մետրի հաշվով այն դեպքում, երբ Եվրամիության երկրները վճարում են 2000 եվրոյից ավել: Ռուսաստանից ենք ստանում նաեւ բենզինը, դիզելային վառելիքը եւ այլ էներգակիրներ: Այս ամենը Հայաստանի համար կարեւոր ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքներ են, քանի որ մենք չունենք այստեղ:

-Ի՞նչ կասեք հացահատիկի հետ կապված:

-Պարենամթերքի զգալի մասը գալիս է Ռուսաստանից՝ մոտ 60 տոկոսի չափով: Հայաստանը տարեկան սպառում է մոտ 350 000 տոննա հացահատիկ, որի 99 տոկոսը անցած տարի ներկրվել է Ռուսաստանի Դաշնությունից եւ այս տարի նույնպես շարունակվելու է: Մենք այլընտրանքային մատակարար այս պահին չունենք. եթե փորձենք անգամ գտնել, դա ավելի թանկ է, քան ռուսական հացահատիկը: Այնտեղից ենք ներկրում շաքարավազ, ձեթ, տարբեր առաջին անհրաժեշտության ապրանքներ, որոնք Հայաստանի համար այս պահին ավելի մատչելի են, քան այլ երկրների համար: Հայաստանի համար Ռուսաստանը համարվում է թիվ 1 ներդրողը: Հիմնական ներդրումները կատարվել են ռուսական ընկերությունների կողմից, եւ սա պետք է գնահատվի եւ կարեւորվի: Հիմնական խնդիրը Ռուսաստան-Հայաստան առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման լոգիստիկ խնդիրն է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ԿՆՔՎԵԼ Է «ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ» ՀՈՒՇԱԳԻՐ

Հայ դատի Գլենդելի հանձնախմբի հաղորդմամբ՝ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի՝ Միացյալ Նահանգներ աշխատանքային այցի ընթացքում՝ սեպտեմբերի 28-ին, ԱՀ արտգործնախարարության եւ Գլենդելի քաղաքային խորհրդի հետ ստորագրվել է Գլենդելի եւ Մարտունիի միջեւ «քույր քաղաքային» հարաբերությունների հաստատման մասին հուշագիր:

Հուշագրի նախագիծը Գլենդելի քաղաքապետ Արտաշես Քասախյանի կողմից քաղաքային խորհրդին ներկայացվել էր դեռեւս օգոստոսի 23-ին եւ միաձայն ընդունվել:

Հուշագրի ստորագրման առթիվ Գլենդելի քաղաքապետ Արտաշես Քասախյանը նկատել է. «Արցախի արտգործնախարար Դավիթ Բաբայանի ներկայությամբ, Գլենդելի եւ Մարտունիի միջեւ «քույր քաղաքների» համաձայնագրի ստորագրմամբ, մենք մեր հավատարմությունն ենք հայտնում արցախահայության ինքնորոշման իրավունքին եւ հայտարարում՝ Ադրբեջանը պետք է պատասխանատվություն կրի հայ ժողովրդի դեմ իր չդադարող ագրեսիայի համար: Կոչ ենք անում ԱՄՆ-ին անհապաղ քայլեր ձեռնարկել՝ դատապարտելու Ադրբեջանի ագրեսիան, կիրառելու Բաքվին տրամադրվող ռազմական օգնության սահմանափակումները եւ շտապ մարդասիրական օգնություն տրամադրել Արցախի՝ վտանգի տակ գտնվող բնակչությանը»:

Երկու քաղաքների միջեւ կապերը խթանելու նպատակով Հայ դատի Գլենդելի հանձնախումբը հայտարարել է «Գլենդել-Մարտունի քույր քաղաքների ասոցիացիայի» աշխատանքների մեկնարկի մասին՝ երկու քաղաքների միջեւ դյուրացնելու մշակութային, կրթական եւ մարդասիրական փոխանակումները:

Իր հերթին Հայ դատի Գլենդելի հանձնախմբի նախագահ Լյուսի Պետրոսյանը նշել է. «Արցախի արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի ներկայությամբ ստորագրելով այս համաձայնագիրը՝Գլենդելի քաղաքային խորհուրդը համերաշխության եւ հույսի հզոր ուղերձ է հղում արցախահայությանը, որը շարունակում է բախվել գոյութենական սպառնալիքին»:

Ավելին՝ սեպտեմբերի 23-ին Գլենդելի քաղաքային խորհրդի անդամները համատեղ ստորագրությամբ նամակներ են ուղարկել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիին եւ նախագահ Ջոզեֆ Բայդենին՝ հանդես գալով Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան անվտանգային օժանդակության դադարեցման եւ 907-րդ բանաձեւի վերականգման օգտին:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 28-ին ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը խորհրդարանում հանդիպում է ունեցել Հաագայի նախկին փոխքաղաքապետ Մարոլայն դե Յոնգի եւ հոլանդական «D66» կուսակցության միջազգային համագործակցության բաժնի ներկայացուցիչ Մայես Բոսի հետ:

«Խոսեցինք Արցախի եւ Հայաստանի Հանրապետությունների դեմ Ադրբեջանի սանձազերծած զինված ագրեսիայի հետեւանքով ստեղծված իրավիճակի, մասնավորապես՝ սահմանամերձ շրջաններում բնակիչների ամենատարրական՝ կյանքի եւ խաղաղ ապրելու, կրթության իրավունքների ոտնահարման, մինչ օրս Ադրբեջանի կողմից պահվող գերիների, անհետ կորածների մասին:

Անդրադարձ կատարեցի արցախյան հակամարտությանը եւ ադրբեջանաթուրքական տանդեմի կողմից իրականացվող հայատյաց քաղաքականությանը:

Գործընկերներիս ներկայացրի համապարփակ զեկույց Ադրբեջանի կողմից հայերի նկատմամբ իրականացված խոշտանգումների, միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումների եւ ռազմական հանցագործությունների մասին»,- հայտնում է Թագուհի Թովմասյանը:

ՑՈՒՑՄՈՒՆՔ

«Ժողովուրդ»օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արցախի պաշտպանության նախկին նախարար Ջալալ Հարությունյանի դեմ հարուցված քրեական գործի շրջանակներում ցուցմունք են տվել նաեւ Ցորի զորամասում ծառայած ժամկետային զինծառայողների ծնողները: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ջալալ Հարությունյանին մեղադրանք առաջադրելուց առաջ հարցաքննվել են զորամասի զոհված զինծառայողների 20 ծնողներ եւ կոնկրետ ցուցմունքներ տվել Ջալալ Հարությունյանի դեմ: Ծնողները մանրամասնել են, թե ովքեր են պատասխանատուները իրենց երեխաների մահվան հարցում: Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի պաշտպանության բանակը ղեկավարած Ջալալ Հարությունյանին երկու դրվագով առաջադրված մեղադրանքներից մեկը Ցորի զորամասի հրետանավորների զոհվելու հանգամանքներին է վերաբերում: 44-օրյա պատերազմի օրերին ծանր վիրավորում ստացած ու այդ պատճառով պաշտոնից ազատված 47-ամյա Ջալալ Հարությունյանին առաջադրված մեղադրանքի մյուս դրվագի համաձայն՝ հենց նրա գործողությունների հետեւանքով են հոկտեմբերի 7-ին՝ հակահարձակման ժամանակ, հայկական ստորաբաժանումները մարդկային մեծաքանակ ուժի ու զինտեխնիկայի կորուստ կրել, պահեստային ստորաբաժանումները դարձել են ոչ մարտունակ, զբաղեցրած կրակային դիրքերն անցել են հակառակորդի հսկողության տակ: Ի դեպ, Ցորի զորամասի զինվորների մահվան դեպքով կա կալանավորված. վերջինս ՊԲ հրետանային դիվիզիոնի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ, կոչումով մայոր Գեւորգ Գեւորգյանն է, որի գործն արդեն դատարանում է:

ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազությունում պաշտոնյաների ազատումները հասան «Մարտի 1»-ի գործի հետ կապ ունեցող դատախազներին: Երեկ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Վաղինակ Ջանազյանն աշխատանքից ազատվելու դիմում է գրել: Նորանշանակ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ստորագրել է հրամանը՝ Վաղինակ Ջանազյանին հոկտեմբերի 3-ից աշխատանքից ազատելու վերաբերյալ: Վերջինս պատահական մարդ չէ համակարգում: Վաղինակ Ջանազյանը ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության պետի տեղակալ է եղել, այնուհետեւ՝ ավագ դատախազ, Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ, իսկ 2021-ից՝ Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ: Նրա անունը, սակայն, հայտնի է այլ գործով: Դեռեւս 2011 թվականին ՀՔԾ նախկին պետ Անդրանիկ Միրզոյանը որոշում էր կայացրել 2008թ. մարտի 1-ի գործով քննչական խմբի արդեն նախկին ղեկավար Վահագն Հարությունյանին այլ պաշտոնի տեղափոխել եւ նրա փոխարեն «Մարտի 1»-ի գործով քննչական խմբի ղեկավարման աշխատանքները հանձնել ՀՔԾ հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Վաղինակ Ջանազյանին: Վաղինակ Ջանազյանն էլ ընդունել էր «Մարտի 1»-ի գործով վարույթը, որը քննել էր այդ տարիներին: «Մարտի 1»-ի գործը մինչ օրս բացահայտված չէ, փողոցում գնդակահարված քաղաքացիների սպանությունները ցայսօր չեն բացահայտվել:

ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴՈՒՄ ՀԱՆԳԻՍՏ Է

«Ներքին Հանդում իրավիճակը կայուն է, մեզ մոտ երեկ հանգիստ է եղել, կրակոցներ չեն հնչել»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Ներքին Հանդի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը՝ անդրադառնալով սահմանային լարված իրավիճակին: Նշենք, որ երեկ հակառակորդը արեւելյան ուղղությամբ սկսել էր ինտենսիվորեն կրակ բացել հայկական դիրքերի ուղղությամբ: Ունենք երեք զոհ: Հիշեցնենք, որ, սեպտեմբերի 13-ի գիշերվանից սկսած, ադրբեջանական զինուժը ինտենսիվ հրետանային գնդակոծության է ենթարկել հայկական բանակի դիրքերը, ինչպես նաեւ Սյունիքի, Վայոց ձորի եւ Գեղարքունիքի խաղաղ բնակավայրերը: Տարբեր ինտենսիվությամբ մարտեր էին ընթանում տարբեր ուղղություններով՝ Սոթք, Վարդենիս, Արտանիշ, Գորիս, Կապան, Ջերմուկ, Իշխանասար, Ներքին Հանդ: Սեպտեմբերի 14-ի երեկոյան պայմանավորվածություն է ձեռք բերվել հրադադարի մասին: Սեպտեմբերի 19-ի դրությամբ հայկական կողմից զոհվածների եւ անհետ կորածների թիվը 207 է, զոհվածների թվում կա երեք խաղաղ բնակիչ: Վիրավորվել է 293 զինծառայող եւ 7 խաղաղ բնակիչ: Առնվազն 20 զինվորական գերի է ընկել:

ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ՝ ՀՆԱ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ

Նախատեսվում է, որ այս տարի կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ 53 տոկոսից ցածր կլինի՝ 2021-ի 60.3 տոկոսի համեմատությամբ, իսկ 2023-ի համար պետությունը նախատեսում է պարտքային միջոցների ներգրավումն իրականացնել այնպես, որ տարեվերջին կառավարության պարտքի հանրագումարը գտնվի ՀՆԱ-ի 50 տոկոսի սահմաններում:

Այս մասին հայտնեց ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը կառավարության նիստում «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացմանը:

«Մակրոտնտեսական կայունությունը երաշխավորելու նպատակով շարունակելու է առանցքային նշանակություն ունենալ պետական պարտքի հուսալի կառավարումը: Վերջին մակրոտնտեսական զարգացումները եւ դրամի արժեւորումը նպաստել են նրան, որ 2022 թվականի արդյունքներով արձանագրվի ՀՆԱ-ի նկատմամբ կառավարության պարտքի հարաբերության զգալի բարելավում: Եթե 2021 թվականի արդյունքներով կառավարության պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում էր 60.3 տոկոս, ապա այս տարվա արդյունքներով այն կլինի 53 տոկոսից ցածր սահմանում: Հաշվի առնելով կառավարության պարտքն ավելի կառավարելի եւ անվտանգ միջավայրում կայունացնելու կարեւորությունը՝ նախատեսում ենք գալիք տարվա ընթացքում շարունակել այդ քաղաքականությունը: 2023 թվականի ընթացքում նոր պարտքային միջոցների ներգրավումը կիրականացվի այնպես, որ տարեվերջին կառավարության պարտքի հանրագումարը գտնվի ՀՆԱ-ի 50 տոկոսի սահմաններում»,-ասաց Խաչատրյանը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւս արձանագրեց՝ պետական պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային էական նվազում է ունեցել: Փաշինյանը սա կարեւոր ցուցանիշ համարեց թե՛ երկրի ներսում եւ թե՛ արտաքին աշխարհի համար: «Այստեղ էական դերակատարում է ունեցել դրամի ամրապնդումը: Թեեւ այդտեղ կան քննարկումներ, այնուամենայնիվ, կարծում եմ՝ այն, որ դրամը ուժեղ է եւ կայուն է, նաեւ մեր տնտեսական կայունության կարեւոր գործոն է»,-նշեց վարչապետը:

Անդրադառնալով ՀՆԱ-ին՝ վարչապետն ասաց, որ այս տարի երկնիշ տնտեսական աճ է սպասվում: «Եթե այս տարվա մեր պլանները կատարվեն, մենք նույնիսկ չենք բացառում, որ կունենանք տնտեսական աճի այնպիսի ցուցանիշ, որով կարող ենք արձանագրել, որ 2020 թվականի ճգնաժամային ճեղքը կարող ենք հաղթահարված համարել եւ արդեն անցնել բնականոն տնտեսական աճի ռեժիմի: Բայց պետք է արձանագրենք, որ 2023 թվականի 7 տոկոս տնտեսական աճի ապահովումը մեծապես կախված է կապիտալ ծախսերի իրականացման որակից»,-ասաց նա:

Ապա վերադառնալով 2023-ի պետբյուջեի նախագծին՝ նախարար Խաչատրյանն ասաց, որ կառավարության 2021-2026 թթ գործունեության ծրագրի առանցքային քաղաքականություններից մեկը հանրային հատվածի ֆինանսական հնարավորությունների կամ կառավարության հարկային եկամուտների ավելացումն է: Հարկեր-ՀՆԱ ցուցանիշի բարելավումը այդ քաղաքականության հիմնական ցուցանիշն է, որը 2026-ի համար սահմանվել է 25 տոկոս:

«Կանխատեսվում է, որ 2022 թվականի արդյունքներով այս ցուցանիշը կկազմի ՀՆԱ-ի 23.2 տոկոսը: 2023 թվականին եւ հաջորդ յուրաքանչյուր տարում հարկերը ՀՆԱ-ի նկատմամբ պետք է ավելանան տարեկան 0.5 տոկոսային կետով, ինչը եւ արտացոլված է գալիք տարվա պետբյուջեի նախագծում: 2023 թվականին հարկային եկամուտները կկազմեն 2 տրլն 204 մլրդ դրամ՝ այս տարվա համար սպասվող ցուցանիշները գերազանցելով 280 մլրդ դրամով, իսկ տարվա համար նախապես ծրագրավորված ցուցանիշը՝ 360 մլրդ դրամով»,-ասաց Խաչատրյանը:

2023 թվականի ընթացքում պետբյուջեի դեֆիցիտը կկազմի ՀՆԱ-ի 3.1 տոկոսը:

Զգալի ֆինանսական ավելացումներ կկատարվեն տնտեսական եւ սոցիալական աջակցության ծրագրերին: Կենսաթոշակների ֆինանսավորման ավելացումը գալիք տարվա բյուջեով կլինի ավելի քան 25 մլրդ դրամով: Չհաշված կորոնավիրուսի համավարակի դեմ միջոցառումների հատկացված ֆինանսավորման գումարները՝ ապա այս տարվա համեմատությամբ 2023 թվականի ֆինանսական հատկացումները առողջապահության ոլորտում կաճեն ավելի քան 11.5 մլրդ դրամով:

Կառավարությունը հաստատել է 2023 թվականի պետական բյուջեի նախագիծը, այն կուղարկվի Ազգային ժողովի քննարկմանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ԶԵՆՔ ԿՄԱՏԱԿԱՐԱՐԻ

Հնդկաստանը Հայաստանին զինամթերք կմատակարարի:

Կառավարությունները զենք եւ զինամթերք մատակարարելու համար մի շարք պայմանագրեր են կնքել այս ամսվա սկզբին:

The Economic Times-ի աղբյուրների համաձայն՝ Հնդկաստանը Հայաստան կարտահանի Pianka հրթիռային համակարգեր, որոնք արդեն իսկ ծառայում են հնդկական բանակին:

Հնդկաստանը նաեւ Հայաստանին կմատակարարի հակատանկային հրթիռներ, ինչպես նաեւ այլ զինամթերքներ: Ըստ հրապարակման՝ նախատեսված է նաեւ Swathi ռադարների մատակարարում:

Ըստ աղբյուրի՝ մատակարարումների ընդհանուր ծավալը կկազմի մոտ 244 միլիոն դոլար:

ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին Սյունիքի մարզում հանդիպել է տեղահանված եւ սեպտեմբերի կեսերի հարձակումներից տուժած ընտանիքների ու անձանց հետ:

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունից հայտնում են, որ քննարկվել են մարզի բնակչության առաջ ծառացած մարտահրավերներն ու հրատապ խնդիրների լուծման ուղիները:

Դեսպան Թրեյսին եղել է Ակներ գյուղում, որը տուժել է հրետակոծությունից: Հանդիպման ընթացքում նա ընդգծել է, որ Միացյալ Նահանգները շարունակում է աջակից լինել Հայաստանի ինքնիշխանությանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28–ԻՆ

Հարավային Կովկասում եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարն անդրադարձել է սեպտեմբերի 28-ի երեկոյան ադրբեջանական հերթական սադրանքին, որի հետեւանքով զոհվել է 3 հայ զինծառայող:«Այսօր կրկին տեղեկություններ են ստացվել 3 հայ զինծառայողի սպանության եւ մեկ ադրբեջանցի զինծառայողի վիրավորվելու մասին: Այս եւ շատ այլ չարդարացված զոհեր սնուցում են ատելություն ու անկայունություն»,-նշել է Կլաարը: Ըստ նրա՝ անվտանգությունը իսկապես հնարավոր է միայն այն դեպքում, եթե սահմանները հարգվեն, եւ զորքերը միմյանց շատ մոտ չլինեն: «Խաղաղությունը չի կարող պարտադրվել»,-հավելել է Կլաարը:

ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՅՑ

ՍՊԱՆԵԼ ԵՆ ՎԻՐԱՎՈՐ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Ադրբեջանական զինված ուժերը սեպտեմբերի 13-ին սկսած ագրեսիայի ընթացքում դաժանաբար սպանել են հայ վիրավոր զինծառայողներին, ամենավերջին վայրագ կերպով վարվել զոհվածների մարմինների հետ, ապա նկարել եւ տարածել: ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր Առաքել Մարտիկյանն այս մասին ներկայացրեց օտարերկրյա դիվանագետներին Վարդենիսում:

«ՀՀ ԶՈՒ-ին հաջողվում է կատարել իր առջեւ դրված խնդիրներն ու ապահովել ազգաբնակչության անվտանգությունը: Ադրբեջանցիներին հաջողվել է մտնել միայն այն դիրքերը, որտեղ մինչեւ վերջ մեր զինվորները կանգնել են եւ զոհվել: Այսինքն՝ այն մարտական դիրքերը, որտեղ ադրբեջանցիներին հաջողվել է զբաղեցնել, մենք ունեցել ենք միայն զոհեր եւ ծանր վիրավորներ: Ադրբեջանի՝ «մարդասիրական լոզունգով առաջնորդվող» ԶՈՒ-ն դաժանաբար սպանել են մեր վիրավոր զինծառայողներին, առանց ամաչելու հաշվեհարդար տեսել նրանց հետ, ամենավերջին վայրագ կերպով են վարվել զոհվածների մարմինների հետ, առավել եւս՝ կին զինծառայողների հետ, որոնք եղել են սանիրահանգիչներ եւ բուժաշխատողներ»,-ասաց ԳՇ պետի տեղակալը՝ հավելելով, որ հենց նրանք են նկարել եւ տարածել սոցցանցերում:

Մարտիկյանը հավելեց՝ հայկական կողմի համար պարզ է, թե ում հետ գործ ունի ռազմական տեսանկյունից:

«Եվ ես պետք է հավաստիացնեմ, որ Զինված ուժերն ամեն ինչ անելու են, որ կասեցնեն հակառակորդի առաջխաղացումը եւ ապահովեն մեր ազգաբնակչության ազատ, անկախ եւ անվտանգ կյանքը»,-ասաց Մարտիկյանը:

Անդրադառնալով օպերատիվ իրավիճակին՝ նա հայտնեց, որ իրավիճակը շփման ողջ երկայնքով այսօրվա ընթացքում եղել է համեմատաբար հանգիստ, բացառությամբ կրակի ռեժիմի մի քանի խախտումների: Վերջին խոշոր կրակի ռեժիմի խախտումը տեղի է ունեցել սեպտեմբերի 28-ին Ջերմուկի շրջանում, որտեղ հակառակորդը կիրառել է 82 միլիմետրանոց ականանետ եւ ԱԹՍ-ներ, որի արդյունքում հայկական կողմն ունի 3 զոհ:

Ադրբեջանական հերթական ագրեսիան նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո արդեն երրորդ լայնամասշտաբ գործողությունն էր՝ ուղղված հիմնականում Հայաստանի բնակեցված շրջանների դեմ: Նա հիշեցրեց, որ սեպտեմբերի 13-ի գիշերը Ադրբեջանը սկսել է երեք ուղղություններով բավականին ագրեսիվ, լայնամասշտաբ մարտական գործողություններ: Մարտական գործողությունները միանգամից սկսվել է ցամաքային զորքերի հարձակողական գործողություններով, որոնք ուղեկցվել են հրթիռահրետանային կրակով եւ անօդաչուների կրակային աջակցությամբ:

«2020 թվականի նոյեմբերի 9-ի ստորագրած հայտարարությունից, մնացած փաստաթղթերից հետո սա արդեն 3-րդ նման լայնամասշտաբ գործողությունն էր՝ ուղղված հիմնականում մեր բնակավայրերի դեմ: Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը բազմիցս պնդում է, թե, իբր, իրենց վերջին գործողությամբ իրենք ստիպված նախահարձակ են եղել, որպեսզի կասեցնեն ՀՀ ԶՈՒ-ի ինչ-որ երեւակայական գործողություններ: Որպես ԶՈՒ ԳՇ պետի տեղակալ՝ ես ձեզ պաշտոնապես հայտարարում եմ, որ հայկական ԶՈՒ-ի կողմից ոչ մի նման միջոցառում պլանավորված չի եղել եւ չի էլ կարող լինել, քանի որ դա հակասում էր մեր ռազմաքաղաքական ղեկավարության հրամաններին»,-հայտարարեց ԳՇ պետի տեղակալը:

Նա ընդգծեց, որ փոխարենը ադրբեջանական կողմից ռազմաքաղաքական ղեկավարները բազմիցս նշում են, թե Հայաստանն ամբողջությամբ իրենց պատմական տարածքն է, իսկ այս տարածաշրջանը միշտ ընդգծված կերպով նշվում է որպես «Բասարգեչար»:

«Գործողությունները երեք ուղղություններով հիմնականում ուղղված էին խիստ բնակեցված շրջանների դեմ մի պարզ նպատակով. դեռեւս 2021-ի մայիսի 12-ից սկսած ուղղվածությունը հենց բնակավայրերի կողքին է՝նպատակ ունենալով ստիպել սահմանամերձ շրջանների ազգաբնակչությանը լքել իրենց զբաղեցրած տարածքները: Այսօր արդեն բավականին բարդ է գյուղացիների համար մշակել իրենց հողերը կամ զբաղվել անասնապահությամբ սահմանամերձ շրջաններում»,-ասաց Մարտիկյանը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՆՈՐ ՉԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ԴԵՊՔՈՎ

Սեպտեմբերի 24-ին Մալաթիայում աղմկահարույց կրակոցների հետեւանքով երեկ երկրորդ անձն է ձերբակալվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ձերբակալվածը դպահեստապետի դստերը սիրող երիտասարդն է՝ Արթուրը, որն այդ օրը գնացել էր Մալաթիա՝ խոսելու սիրած աղջկա հոր հետ, ինչի հետեւանքով կրակոցներ հնչեցին, եւ երկու մարդ սպանվեց:

ArmLur.am-ը գրել էր, որ իրավապահ համակարգում Մալաթիայի կրակոցներից հետո խիստ խորհրդակցություն է եղել, որով իրավապահները նշել են, թե երկրում առկա այս պայմաններում նմանօրինակ կրակոցներ արձակած անձինք թուրքից վատն են. եթե երկրում առկա լարված վիճակը նրանց չի անհանգստացնում, ապա նրանց այլ բառով բնորոշել հնարավոր չէ:

Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 24-ին Մալաթիայում աղմկահարույց կրակոցների հետեւանքով սպանվեց երկու անձ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝վիճաբանությունը եղել է աղջկա համար: Իսկ կոնկրետ ի՞նչ աղջկա մասին է խոսքը: Բանն այն է, որ մի երիտասարդ սիրել է ոսկու շուկայի հետնամասում գտնվող պահեստապետի դստերը եւ այդ օրը իր ընկերների հետ գնացել եւ փորձել է խոսել իր սիրելի աղջկա հոր հետ: Խոսակցությունն այդքան էլ լավ ընթացք չի ստացել, եւ տղայի ընկերներից մեկը սկսել է կրակել, որի հետեւանքով երկու անձ սպանվեց: Մեզ հայտնի դարձավ, որ կրակողը ջավախահայ է եւ այժմ կալանավորված է:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 24-ին մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 21:00-ի սահմաններում ոստիկանության Մալաթիայի բաժին ահազանգ է ստացվել, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Վանցյան փողոցում՝ ոսկու շուկայի հետնամասում գտնվող պահեստային հատվածում, կրակոցներ են հնչել: Ոստիկանները դեպքի վայրում հայտնաբերել են տղամարդու դի, 1 հոգի էլ նշված վայրից տեղափոխվել է «Աստղիկ» բժշկական կենտրոն, որի կյանքը փրկել չի հաջողվել: Ասել է թե՝մեկ գիշերվա մեջ երկու անձ սպանվեց:

Փաստի առթիվ Մալաթիայի բաժնում սպանության եւ սպանության փորձի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԻՆՔՆԱՄՊԱՆ Է ԵՂԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ինքնասպանության դեպք է եղել Կոտայքի մարզի Արզնի գյուղում:

Սեպտեմբերի 26-ին Արզնի գյուղի բնակիչը այգում ծառից պարանով կախված վիճակում հայտնաբերել է հորը՝ Ս.Բ-ին: Ըստ հարազատների՝ այս քայլի պատճառը եղել է այն, որ հայրն ունեցել է մի շարք հիվանդություններ:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՎԱՐՏՎԻ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն առաջիկայում որոշում կկայացնի վարչապետի ավտոշարասյան կողմից վրաերթի ենթարկված Սոնա Մնացականյանի մահվան դեպքով:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Քննչական կոմիտեի կողմից կրկնակի դատաավտոտեխնիկական-դատատեսաձայնագրային փորձաքննության եզրակացությունը ստացվել է, եւ շուտով նախաքննությունը կավարտվի, վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ կուղարկվեն դատարան:

Հիշեցնենք, որ ապրիլի 26-ին վարչապետի ավտոշարասյան կողմից Պարոնյան-Լեո փողոցների խաչմերուկում մահացու վրաերթի է ենթարկվել Սոնա Մնացականյանը: Վերջինիս ընտանիքի անդամներն ու փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը պնդում են, որ մի շարք ապացույցներ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից քննիչին չեն տրամադրվել:

Ավելին՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան կողմից Սոնա Մնացականյանին մահվան ելքով վթարի ենթարկելու դեպքն այնքան է անհանգստացրել միջազգային կառույցներին, որ նրանք կտրուկ քայլերի են գնացել: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Գերմանիայի Բունդեսթագի բազմաթիվ պատգամավորներ վթարի արդյունքում մահացած Սոնա Մնացականյանի դեպքով դիմել են ՀՀ կառավարությանը եւ Ազգային ժողովին: Ըստ ամենայնի, նրանք կոնկրետ հարցեր են ուղղել ՀՀ Ազգային ժողովին, թե ինչպես է ստացվել, որ գործով մեղադրյալը կալանքի տակ չէ:

Հավելենք, որ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյանն ուղեկցող ՃՈ ավտոմեքենան վրաերթի է ենթարկել հղի կնոջը ու հեռացնել դեպքի վայրից: Քննչական կոմիտեն, սակայն, ի սկզբանե ՃՈ մայորին մեղադրանք է առաջադրել միայն ՀՀ ՔՕ 242-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ դեպքի վայրը լքելու հոդվածով՝ ոչ:

Հետագայում գործի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը ցուցում է տվել լրացնել մեղադրանքը՝մեղադրանք առաջադրելով նաեւ ՀՀ ՔՕ 244-րդ հոդվածի 1-ին մասով, եւ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն հարուցելու մասին: Արամ Նավասարդյանի մեղադրանքը լրացվել է, սակայն նա ազատության մեջ է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱԲՍՈՒՐԴ Է

Կառավարությունն իր երեկվա՝ սեպտեմբերի 29-ի նիստում հավանություն տվեց «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխությունների նախագծին: Նախագծով առաջարկվում է 2023 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափը բարձրացնել՝ 68,000 ՀՀ դրամից դարձնելով 75,000 ՀՀ դրամ եւ, ըստ այդմ, սահմանել գործավարձով կամ ժամավճարով վարձատրվող կամ ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով աշխատողների համար ժամային տարիֆային դրույքի նոր նվազագույն չափեր:

«Կրթությունը մարդուն հնարավորություն է տալիս, որ նա ստիպված չլինի աշխատել 75 հազար դրամով: Եթե մարդը աշխատում է ամսական 75 հազար դրամով կամ աշխատանք չունի, դա նշանակում է, որ նա պատշաճ կրթություն չի ստացել, ընդ որում՝ խոսքը միայն բարձրագույն կրթության մասին չէ»,- նշեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ընդծելով, որ կրթությունն անկյունաքարային նշանակություն ունի բոլոր ոլորտներում:

Այս առնչությամբ ArmLur.am-ը զրուցել է ԵՊՀ դասախոս Նարինե Դիլբարյանի հետ:

«Այդ որ իրենք բարձր աշխատավարձ են ստանում, լավ կրթություն են ստացե՞լ, հա՞: Կարծում եմ՝ սա աբսուրդի ժանրից է: Իհարկե, ես հասկանում եմ, որ Հայաստանը աբսուրդի երկիր է, բայց մ՛յս մակարդակի: Ուսուցչի, դասախոսի, դոցենտի պաշտոնը զբաղեցնելու համար կա հատուկ սահմանված կարգ, դրույքաչափ, եւ եթե դու դրան չհամապատասխանես, լավ կրթություն, ստաժ, պաշտպանություն չունենաս, քեզ պարզապես աշխատանքի չեն վերցնի: Ամեն աշխատանք ենթադրում է պարտադիր պայմաններ. վարչապետի պաշտոն չէ, որ սահմանված չէ, թե ինչ կրթություն պետք է ունենա, ինչ գիտական այլ ծառայություններ ունենա»,- նշեց նա:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿԱՄԵՑՎԵԼ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչները վերահսկողություն են իրականացրել անհատ ձեռնարկատեր Գարեգին Պետրոսյանին պատկանող հանրային սննդի օբյեկտում (Տիգրան Մեծի պողոտա 31ա/2) եւ պարզել, որ վերջինս գործում է սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՍԱՏՄ-ից:

Մասնավորապես՝ օբյեկտում նախատեսված չեն եղել համապատասխան տարածքներ եւ անհրաժեշտ հարմարություններ աշխատանքային գործիքների, պարագաների պահման համար, սննդի կառույցն ապահովված չի եղել սանհանգույցներով՝ միացված գործող կոյուղուն, չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ կենդանիների մուտքը արտադրամասի տարբեր տարածքներ կանխելու համար:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ հանրային սննդի օբյեկտի գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ խախտումները վերացնելու համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԵՆ

Իսկ ինչի՞ց է սկսվել պատմությունը:

2021 թվականի օգոստոսի 10-ին «Ժողովուրդ» օրաթերթը մի հոդված էր հրապարակել այն մասին, որ, որպես առողջապահության փոխնախարարի, շրջանառվում է Սամվել Խարազյանի անունը, որը «նախկիններին» օրոք երկար տարիներ աշխատել է կոռուպցիոն սկանդալներով հայտնի Պետական առողջապահական գործակալությունում՝ որպես բաժնի պետ եւ, որ ամենաուշագրավն է, ՊԱԳ այդ ժամանակվա պետ Սարո Ծատուրյանի հետ անգամ հասցրել է ձերբակալվել՝ պաշտոնեական դիրքի չարաշահման մեղադրանքով: Հիշեցնենք, որ երկար տարիներ ՊԱԳ-ում էր աշխատել Արսեն Թորոսյանի կողմից փոխնախարար նշանակված Արսեն Դավթյանը, որը վերջերս դատապարտվեց 7 տարվա ազատազրկման առանձնապես խոշոր չափով կաշառք ստանալու համար: Այս հոդվածը ամբողջությամբ, իսկ վիճարկվող մասը հատկապես հիմնված է պաշտոնական տեղեկության եւ գնահատողական դատողության վրա, որը էլի հիմնված էր պաշտոնական տեղեկությունների վրա: Այսինքն՝ Առողջապահության պետական գործակալությունը իրապես եղել է Հայաստանի ամենակոռումպացված համակարգերից մեկը եւ շարունակում է մնալ, ինչի մասին բոլորովին վերջերս Հանրային հեռուստաընկերության եթերում հայտարարեց նաեւ ՊՎԾ պետ Ռոմանոս Պետրոսյանը: Իսկ կոնկրետ Սամվել Խարազյանի մասով տեղեկությունը, որ նա ձերբակալված է եղել եւ անցել է մի քրեական գործով, հիմնված էր ՀՀ իրավապահներից ստացված պաշտոնական տեղեկության վրա, բայց հայցվորը, առանց մեզ հերքման պահանջ ներկայացնելու, միանգամից դատարան է դիմել:

Հիմնազուրկ դատավճիռը

Եւ, ահա, Երեւան քաղաքի դատարանի դատավոր Լիզա Գրիգորյանը 13.04.2022-ին կայացրել է դատավճիռ. «Պարտավորեցնել պատասխանող «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊ ընկերությանը հրապարակային ներողություն խնդրել հայցվորի վերաբերյալ կատարած վիրավորական

Նախկին կոռումպացված համակարգի աշխատակից նախկին մեղադրյալը, «Ժողովուրդ» օրաթերթի հաշիվները արգելանքի տակ դնելով, փորձում է ինքնամաքրվել

արտահայտությունների համար («...Օրինակ՝ առողջապահության համակարգից մեզ հասած տեղեկություններով՝ որպես առողջապահության փոխնախարար շրջանառվում է Սամվել Խարազյանի անունը, որը «նախկինների» օրոք երկար տարիներ աշխատել է կոռուպցիոն սկանդալներով հայտնի Պետական առողջապահական գործակալությունում՝ որպես բաժնի պետ եւ, որ ամենաուշագրավն է, ՊԱԳ այդ ժամանակվա պետ Սարո Ծատուրյանի հետ անգամ հասցրել է ձերբակալվել՝ պաշտոնեական դիրքի չարաշահման մեղադրանքով (այդ թեմային «Ժողովուրդը» մի քանի անգամ անդրադարձել է): .... Հեղափոխական իշխանությունների միակ հույսը մնացել են «նախկիններից» մնացած, բայց ոչ թե իրական պրոֆեսիոնալ, այլ կոռումպացված կադրերը), որոնք հիմնված չեն փաստերի եւ բավարար փաստակազմի վրա: «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊ ընկերությունից հօգուտ Սամվել Ջանիբեկի Խարազյանի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊ ընկերությունից հօգուտ Սամվել Ջանիբեկի Խարազյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար»: Ի՞նչ է ստացվում. լրագրողը հրապարակել է նյութ՝ բացառապես հենվելով ՀՀ քննչական կոմիտեից ստացված պաշտոնական տեղեկությունների վրա, եւ դատավոր Լիզա Գրիգորյանը վճռել է, թե անհիմն վիրավորանք է հնչեցվել: Հետաքրքիր է, թե փաստական ինչ հանգամանքներ է ուսումնասիրել դատավոր Գրիգորյանը, որ զրպարտություն է համարել ակնհայտ ճշմարտությունները:

Իսկ ո՞վ է հայցվորը:

«Ասիական զարգացման բանկ»-ի բժշկական ապահովագրության գծով փորձագետ Սամվել Խարազյանն է հայցվորը, որը աշխատել է Հայաստանի իսկապես ամենակոռումպացված համակարգերից մեկում եւ անցել մի քրեական գործով՝ պաշտոնական դիրքի չարաշահման հատկանիշներով. ձերբակալվել է, նրա նկատմամբ ընտրվել է խափանման միջոց՝ երկրից չբացայայտելու վերաբերյալ: Այնուհետեւ վերաորակվել է այս գործը՝ որպես պաշտոնական անփութություն: Վերաորակվել է, քանի որ Սամվել Խարազյանը զղջացել է կատարած հանցավոր արարքների համար, պետությանը հասցված վնասը վերականգնել է, ինչի հիմքով էլ քրգործը կարճվել է:

Կցում ենք նաեւ ՀՀ քննչական կոմիտեի կողմից տրված պաշտոնական պատասխանը: ՀՀ քննչական կոմիտեի պատասխանի բովանդակությունը թույլ է տալիս գնահատել, որ դատավոր Լիզա Գրիգորյանը ակնհայտ ոչ օրինական եւ կողմնակալ վճիռ է կայացրել, որի բողոքարկման ժամկետը օբյեկտիվ պատճառներով բաց ենք թողել (պատերազմական իրավիճակով պայմանավորված):

Հ. Գ. Սամվել Խարազյանը փաստաբան Տիգրան Եգորյանի ձեռքով եւս մեկ հայց է ուղարկվել դատարան՝ դարձյալ նույն հիմքով, թե ինչու ենք հիշեցնում՝ ով է եղել նախկինում Սամվել Խարազյանը, որն իրեն այսօր անկախ փորձագետ է ներկայացնում:

«Ժողովուրդ» օրաթերթը հետամուտ է լինելու իր իրավունքների պաշտպանության հարցում եւ գնալու է մինչեւ վերջ: Մենք պետք է մեր բնականոն գործունեությունը կարողանանք վերականգնել եւ ազատ տիրապետել մեր ֆինանսական միջոցներին: Մեզ արգելանքներով չե՛ք կարող վախեցնել:

«Ժողովուրդ» օրաթերթի եւ ArmLur.am կայքի խմբագրություն

ՄԱՐՔ

ԱՆՎԱՎԵՐ 5 ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ՔՊ կուսակցության վստահված անձինք՝ Գարիկ Ամիրջանյանը, Խաժակ Մելքումյանը, ավագանու թեկնածուներ Էմանուել Ուզունյանը, Կորյուն Չոբանյանը, Արթուր Ծատուրյանը, Սեւակ Բաղալյանը դիմումներ են ներկայացել թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ պահանջելով Բերդի 38/04, 38/05, 38/07,38/08, 38/15 եւ 38/21 ընտրական տեղամասերում քվեաթերթիկների վերահաշվարկ կատարել: Թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից տեղեկացա, որ սեպտեմբերի 27-ին վերահաշվարկվել են ընտրական 3 տեղամասերի քվեաթերթիկները, վերահաշվարկի արդյունքում 2 հատով պակասել է «Ջորավոր համայնք» դաշինքի օգտին քվեաթերթիկների թիվը, 1-ով՝ ՔՊ-ի օգտին քվեաթերթիկների քանակը, այդ 3 քվեաթերթիկներն անվավեր են համարվել: Սեպտեմբերի 28-ին մնացած 3 ընտրական տեղամասերում քվեաթերթիկների վերահաշվարկի արդյունքում «Արժանապատիվ սերունդ» դաշինքի օգտին քվեաթերթիկների թիվը 2-ով պակասել է, դրանք անվավեր են համարվել:

ԲՈՂՈՔԱՐԿԵԼ Է

Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի բնակիչ, 1966թ.-ին ծնված Հովհաննես Մարաբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Արեւելյան մաքսատուն-վարչության Բագրատաշեն մաքսային կետ-բաժնի պետի տեղակալի պաշտոնը , 2019թ. մայիսի 18-ի լույս 19-ի գիշերը կազմակերպել եւ հսկել է ենթակա աշխատակիցների կողմից մաքսային կետի խորը զննման անգար մուտք եղած ավտոմեքենաների ու դրանցում առկա բեռների զննման, կշռման, հաշվառման եւ ձեւակերպման ողջ գործընթացը: Ներկրված բեռների մաքսային հսկողության ընթացքում Հ. Մարաբյանը դիտավորությամբ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, ամբողջ ծավալով չի կշռել եւ չի հաշվառել անգարում առկա բեռները, ներկրողները բեռնատար ավտոմեքենաներում բեռնել են չհայտարարագրված եւ անգարի ելքի դռան մոտ կուտակված 13191,89 կգ քաշով ապրանքներ, որոնք մաքսային հսկողության տարածքից դուրս են բերվել՝ օգտագործելով որոշ ապրանքների ձեւակերպման փաստը հաստատող թվով 4 հայտարարագրերը, սակայն դրանց տեղափոխումը Երեւան խափանվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների ձեռնարկած օպերատիվ միջոցառումների արդյունքում: Ա. Մարաբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 2-րդ մասով: Նրա նկատմամբ, որպես խափանման միջոց, կիրառվել է չհեռանալու մասին ստորագրությունը: 2021թ. սեպտեմբերի 21-ին Հ. Մարաբյանը մահացել է: Դատավոր Ջոյա Ջաքինյանը համարել է, որ Հ. Մարաբյանին առաջադրված մեղադրանքը հիմնավոր չէ, անորոշ է, 2022թ. մայիսի 11-ին վճռել է Հ. Մարաբյանին արդարացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառով: Այդ դատավճռի դեմ մեղադրող Ա. Գեւորգյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել, որով խնդրել է բեկանել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի կայացրած վճիռը, Հ. Մարաբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ եւ նրան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված հիմքով ազատել քրեական պատասխանատվությունից: Սույն քրեական գործով վերաքննիչ դատարանում նիստեր են կայանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 10-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան ք., Չարենցի փողոց, 179 շենք, 11 հասցեում գտնվող 36,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 5400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 10-րդ փողոց, 87/1 հասցեում գտնվող 331.4 ք.մ. բնակելի տուն եւ 0.04616 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 57900000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Աբովյան փողոց, 2 շենք, 33 հասցեում գտնվող 38 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 5350000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.10.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 17.11.2022թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Կոտայքի մարզ, համայնք Վերին Պտղնի, Նոր թաղամաս, 1-ին փողոց, 62 հասցեում գտնվող 446.5 ք.մ. բնակելի տուն, 5.9 ք.մ. կաթսայատուն, 16.1 ք.մ. մառան, 29 ք.մ. խոհանոց եւ 0.075 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12600000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.10.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 17.11.2022թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

ԴՊՐՈՑՆԵՐ

ԵՐԿԱՐՕՐՅԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով՝ հաստատվել են հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական օրինակելի ծրագրերը:

Օրինակելի ծրագրերը կազմված են «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի» պահանջին համապատասխան:

Ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական ծրագրերը ներառում են երկարօրյա խմբի սովորողների սննդի, հանգստի, դասապատրաստման կազմակերպումը՝ որպես երկարօրյա կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս: Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո սովորողի համար իրականացվում է սննդի կազմակերպում՝ 1-4-րդ դասարաններում՝ մինչեւ 30 րոպե, իսկ 5-9-րդ դասարաններում՝ մինչեւ 20 րոպե տեւողությամբ: Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո սովորողի համար իրականացվում է հանգստի (այդ թվում՝ զբոսանքի) կազմակերպում՝ 1-4-րդ դասարաններում՝ մինչեւ 80 րոպե, իսկ 5-9-րդ դասարաններում՝ մինչեւ 30 րոպե տեւողությամբ: Սովորողի համար իրականացվում է նաեւ դասապատրաստում՝ 1-4-րդ դասարաններում՝ 2 ակադեմիական ժամ, իսկ 5-9-րդ դասարաններում՝ 3 ակադեմիական ժամ:

Հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել հետեւյալ ծրագրերը՝

-ծնողի նախաձեռնությամբ երկարօրյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաեւ դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր՝ ըստ կրթության աստիճանների (տարրական եւ միջին դպրոց),

-կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր,

-սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման ծրագիր:

Ծնողի նախաձեռնությամբ երկարօրյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաեւ դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարօրյա ուսուցման ծրագրի նպատակներն են իրականացնել խմբում ընդգրկված բոլոր սովորողների դասապատրաստման գործընթացը եւ տրամադրել որակյալ մանկավարժամեթոդական ծառայություններ, աջակցել ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին ուսումնական նյութի յուրացման գործընթացում, ինչպես նաեւ նպաստել եւ աջակցել սովորողների ինքնուրույն սովորելու հմտությունների, ստեղծագործական ունակությունների եւ ինքնակազմակերպման կարողությունների ձեւավորմանն ու զարգացմանը: Միջին դպրոցում այն նպատակ ունի նաեւ բարելավել որեւէ առարկայի (առարկաների) թեմատիկ գրավոր, բանավոր եւ գործնական աշխատանքներից 10 միավորային սանդղակով 1-3 միավոր գնահատված սովորողների ուսումնառության արդյունքները:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագրի նպատակներն են սովորողներին աջակցել անհատական ուսուցման պլանով սահմանված ուսումնական նյութի յուրացման գործընթացում, տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանին համապատասխան աջակցության ծառայություններ, դասապատրաստման գործընթացում կիրառել անհատականացված մոտեցումներ, նպաստել սովորողների ներուժի բացահայտմանը եւ այլն:

Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման ծրագրի նպատակներն են սովորողներին մատուցել ուսումնական հաստատության ֆինանսական միջոցների հաշվին լրացուցիչ կրթական ծառայություններ, յուրաքանչյուր սովորողի տրամադրել որակյալ կրթական, ըստ անհրաժեշտության՝ մանկավարժահոգեբանական ծառայություններ, սովորողների մոտ զարգացնել սոցիալական հմտություններ եւ այլն:

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված կամ պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցումն իրականացվում է երկարօրյա խմբում ընդգրկված մյուս սովորողների հետ համատեղ, առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական նյութերի՝ դասապատրաստման միջոցով յուրացման համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ սահմանվել են պետական եւ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները:

Այս խնդիրների լուծման նպատակով կառավարության որոշմամբ նախադպրոցական ուսումնական հաստատության վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերը դասակարգվել են՝ ըստ հետեւյալ չափանիշների՝ վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ կազմեր: Սահմանվող վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները տարածվում են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների վրա:

Այսպիսով, կառավարության որոշման ընդունմամբ հստակեցվում են նախադպրոցական հաստատությունների վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ կազմերի վարձատրության սկզբունքները՝ ստեղծելով նախադրյալներ վարձատրության քաղաքականության շարունակական բարելավման ուղղությամբ՝ համակարգային մոտեցման շրջանակում:

Նախարարությունից հայտնում են, որ աշխատակիցների վարձատրության խրախուսումը կխթանի նոր եւ որակյալ կադրերի մուտքն այդ հաստատություններ՝ ապահովելով նախադպրոցական ծառայությունների որակի շարունակական բարձրացման նախադրյալները:

Որոշման ընդունումը թույլ կտա նաեւ ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական եւ ուսումնաօժանդակ անձնակազմի վարձատրության միասնական քաղաքականություն:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«ՍՈԼԱՐ-5» ՍՊԸ
(հայտատուի անվանումը)

ՀՀ Գեղարքունիք մարզ, համայնք Ծողկաթ, Աղբերք գյուղի 25-րդ փողոցի թիվ
_____1 հողամաս _____
(աշխարհագրական տարածքը (բնակավայրը, մարզը, քաղաքը))
մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝
_____էլեկտրական էներգիայի արտադրության_____
(էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի, բնական գազի)
_____սակագնի_____
(լիցենզավորված գործունեության իրականացման տեսակը)
սահմանման (վերանայման) հայտով:
Առաջարկվող սակագինը (դրույքը)՝ 25.052 դ/կՎտժ առանց ԱԱՀ
ՀՀ ք. Երեւան, փ. Մ. Մանուշյան 86 տուն / 077856500/ kpkazaryan@gmail.com (հայտատուի գտնվելու վայրը, հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն):

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՎԵՐԵՎՈՒՄ

ՄԵԿ ՏԱՐԻ՝ ԱՌԱՆՑ ՔԵԶ

2021 թվականի սեպտեմբերի 29-ին հիվանդանոցում մահացավ ՀՀ վաստակավոր արտիստ, երգիչ եւ կոմպոզիտոր Հայկոն (Հայկ Հակոբյանը): Մեկ տարի անց Հայկոյի ընկերներն իրեն նվիրված նոր երգ եւ հոլովակ են ներկայացրել հանրությանը:

«Դու գնացիր վերեւ» երգը ներկայացնում են Արսեն Սաֆարյանը, Էրիկ Կարապետյանը, Արամ շբՅ-ն, Գրիգոր Աղախանյանը, Ռաֆֆի Ալթունյանը, Միհրան Ծառուկյանը: Երգի երաժշտության հեղինակը Ռաֆֆի Ալթունյանն է, խոսքերի հեղինակը՝ Գեւորգ Ալթունյանը: Տեսահոլովակը նկարահանել է ռեժիսոր Հրաչ Քեշիիշյանը:

Սիրո հավերժ երգչի մահվան տարելիցին նվիրված գրառումներ են արել իրենց սոցիալական էջերում հայկական շոուբիզնեսի ներկայացուցիչները:

Երգչուհի Սյուզաննա Մելքոնյանը գրել է. «Մեկ տարի՝ առանց քեզ… Այսօրվա պես հիշում եմ՝ ոնց ափսեն ձեռքիցս ընկավ, երբ իմացա այդ լուրը: Չէի հավատում ու չէի կարողանում ընկալել՝ ինչ է կատարվել, մինչեւ չտեսա քեզ: Ասես քնած լինեիր, ում մենք բոլորս այցի էինք եկել: Ննջի՛ր խաղաղությամբ, իմ ավա՛գ ընկեր…

Մեկ տարի սրտումս կիսատ մնաց երազանքս՝ քեզ հետ դուետը, բայց երեւի արդեն կերգենք վերեւում միասին»:

Կոմպոզիտոր Արա Թորոսյանը գրել է. «Ասացիր՝ կապ չունի, թե ինչ կանես, մենակ դու բեմի վրա մեջքիս կանգնած եղիր, ու ես հանգիստ «կուտեմ բեմը» Նույնիսկ չքննարկվեց, թե ինչ ու ոնց եմ անելու, որովհետեւ դու Հայկոն ես: Մեկ տարի....»:

Նշենք, որ Հայկոն 1987 թ. ավարտել է Երեւանի Չուխաճյանի անվան երաժշտական դպրոցը եւ ընդունվել Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան: 1996 թ. «Մոսկվա 96» երգի փառատոնի ժամանակ արժանացել է 1-ին մրցանակին: 1997 թ. մասնակցել է Նյու Յորքի Big Apple երգի փառատոնին եւ դարձել հաղթող: 1998 թ. հայկական «Այո» երգի մրցույթի ժամանակ արժանացել է «Լավագույն հեղինակ-կատարող» մրցանակին: 1999 թ. ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: 1998 թ., 1999 թ., 2002 թ., 2003 թ. եւ 2006 թ. հայկական երաժշտական ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է «Տարվա լավագույն երգիչ» մրցանակին, 2002 թ.՝ «Տարվա լավագույն նախագիծ», «Տարվա լավագույն ալբոմ», 2003 թ.՝ «Տարվա լավագույն տեսասկավառակ» մրցանակներին: 2003 թ. առաջին մենահամերգով հանդես է եկել ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում:

2006 թ. Հայաստանի նախագահի հրամանագրով նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի կոչում:

2007 թ. ներկայացրել է Հայաստանը «Եվրատեսիլ» երգի միջազգային մրցույթի ժամանակ եւ զբաղեցրել 8-րդ տեղը: 2007 թ., 2010 թ. եւ 2011 թ. արժանացել է «Տարվա լավագույն կոմպոզիտոր» մրցանակին «Մի՛ վախեցիր», «Սպանված աղավնի», «Խաչագողի հիշատակարանը» ֆիլմերի երաժշտության համար: Գրել է նաեւ «Ոչինչ չի մնա», «Հոբելյանական հաճախորդ», «Վանա ծովուն արշալույսը», «Գարեգին Նժդեհ» ֆիլմերի երաժշտությունները: 2011 թ. Մոսկվայի հայկական երաժշտական «Արմենիա» ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է «Տասնամյակի երգիչ» մրցանակին: 2012 թ. «Արմենիա» հեռուստաընկերությամբ հանդես է եկել որպես «Հայաստանի ձայնը» հեռուստանախագծի երաժշտական պրոդյուսեր:

2021 թ. սեպտեմբերի 21-ին կորոնավիրուսային հիվանդության պատճառով ծանր վիճակում տեղափոխվել է հիվանդանոց: Մահացել է սեպտեմբերի 29-ին կորոնավիրուսից թոքերի 80% ախտահարմամբ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՉՔՆՆԱԴԱՏԵՔ

ԱՂԱՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՎՐԴՈՎՎԵԼ Է

Դերասան Աղաս Մանուկյանը, անդրադառնալով հայկական շոուբիզնեսի ներկայացուցիչներին, բնաբնությունների կիզակետում պահելուն սոցիալական ցանցի իր էջում վրդովված գրառում է կատարել.

«Բոլորս էլ հասկանում ենք երկրի ծանր վիճակը, ցավն ու տրամադրությունը, բոլորս էլ մարդ ենք, անզգա չենք, բոլորիս էլ մայր ա բերել լույս աշխարհ, բայց խնդրում եմ մի քննադատեք մեզ, էն մարդկանց, ովքեր պետք է զբաղվեն իրենց հիմնական գործով, նկարահանվեն, խաղան ներկայացումներ՝ փորձելով բոլորիս մի պահ կտրել առօրյայից: Նստելն ու միշտ սգի մեջ մնալը մեզ չի ուժեղացնելու»,- նեղսրտաց գրել է դերասանը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ի գիշերվանից սկսած ադրբեջանական զինուժը ինտենսիվ հրետանային գնդակոծության է ենթարկել հայկական բանակի դիրքերը, ինչպես նաեւ Սյունիքի, Վայոց Ձորի եւ Գեղարքունիքի խաղաղ բնակավայրերը: Տարբեր ինտենսիվությամբ մարտեր էին ընթանում տարբեր ուղղություններով՝ Սոթք, Վարդենիս, Արտանիշ, Գորիս, Կապան, Ջերմուկ, Իշխանասար, Ներքին Հանդ: Սեպտեմբերի 14-ի երեկոյան պայմանավորվածություն է ձեռք բերվել հրադադարի մասին: Սեպտեմբերի 19-ի դրությամբ հայկական կողմից զոհվածների եւ անհետ կորածների թիվը 207 է, զոհվածների թվում կա երեք խաղաղ բնակիչ: Վիրավորվել է 293 զինծառայող եւ 7 խաղաղ բնակիչ: Առնվազն 20 զինվորական գերի է ընկել:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան եւ Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Խոակին Կապառոսը երկկողմանի համաձայնությամբ դադարեցնում են համագործակցությունը. իսպանացի մասնագետն այլեւս չի գլխավորի Հայաստանի ազգային հավաքականը: Այս մասին հայտնեցին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից:

ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանը սեպտեմբերի 28-ին հանդիպել է Խոակին Կապառոսի հետ, քննարկել Հայաստանի ազգային հավաքականի այս տարվա ելույթները: Հանդիպման ընթացքում փոխադարձ համաձայնություն է ձեռք բերվել չշարունակել համագործակցությունը:

Արմեն Մելիքբեկյանը հանդիպման ընթացքում շնորհակալություն է հայտնել իսպանացի մասնագետին իր աշխատանքի, Հայաստանի Հանրապետության համար դժվարին օրերին ազգային հավաքականի կողքը մնալու, աշխատանքի ընթացքում մարդկային լավագույն որակներ եւ բարձր պրոֆեսիոնալիզմ դրսեւորելու համար:

Խոակին Կապառոսի գլխավորությամբ Հայաստանի ազգային հավաքականն առաջին անգամ իր պատմության ընթացքում հաղթեց պաշտոնական մրցաշարում՝ գրավելով առաջին տեղը Ազգերի Լիգայի C դիվիզիոնի իր խմբում: Իսպանացի մասնագետի գլխավորությամբ Հայաստանի ազգային հավաքականն ունեցավ իր պատմության ամենաերկար անպարտելի շարքը՝ 9 խաղ: 66-ամյա մասնագետի գլխավորությամբ Հայաստանի ազգային հավաքականն անցկացրեց մի շարք տպավորիչ հանդիպումներ Աշխարհի Գավաթի որակավորման փուլում՝ հիանալի էմոցիաներ պարգեւելով երկրպագուներին:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը, Խոակին Կապառոսի հետ համատեղ աշխատած անձնակազմը եւս մեկ անգամ իրենց խորին շնորհակալությունն են հայտնում իսպանացի մասնագետին կատարած աշխատանքի համար եւ նորանոր հաջողություններ մաղթում հետագա կարիերայի ընթացքում:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Լոս Անջելեսում տեղի է ունեցել Ամերիկայի արեւմտյան ափի Հայ Դատի հանձնախմբի 2022թ. գալա միջոցառում, որի ընթացքում Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանին շնորհվել է Ազատության մրցանակ:

Արցախի ԱԳՆ-ից հայտնում են, որ նախարարը երախտագիտություն է հայտնել Հայ Դատին իր համեստ աշխատանքը նման բարձր գնահատանքի արժանացնելու համար՝ ընդգծելով, որ կշարունակի անմնացորդ ծառայել հայրենիքին եւ պետությանը:

Միջոցառմանը ներկա են գտնվել նաեւ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը եւ ԱՄՆ-ում ու Կանադայում ԱՀ մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը:

● *Սեպտեմբերի 30-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ռոմեո եւ Ջուլիետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում աշխատանքային կենսաթոշակի չափի հաշվարկումը:

Տաթեւիկ Գրիգորյան 59 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի եւ կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է:

Կենսաթոշակի աշխատանքային մասը աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի եւ կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է:

Մինչեւ 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է Կ=Հ+ (Ս Х Ա) Х Գ բանաձեւով, իսկ 10 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Կ=Հ+ (10 Х Ա+(Ս-10) Х Ա1) Х Գ բանաձեւով, որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

Ս-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,

Ա-ն՝ մինչեւ 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Ա1-ը՝ 10 տարին գերազանցող աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակառուի անձնական գործակիցը սահմանվում է՝

1) մինչեւ 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,1,

2) 11-ից մինչեւ 40 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,01,

3) 40 տարուց ավելի աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,02:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկվում է՝

ա) մինչեւ 10 տարվա (ներառյալ) ստաժի առկայության դեպքում՝ Գ=0,1 Х Ս բանաձեւով,

բ) 11-ից մինչեւ 40 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ=1+0,01 Х (Ս-10) բանաձեւով,

գ) 40 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ=1.3+0,02 Х (Ս-40) բանաձեւով:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը չի կարող գերազանցել 2-ը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չվճարված գումարը ինչպե՞ս է վճարվում:

Լալա Յավրյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծերության կամ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող անձին չվճարված նպաստի գումարը վճարվում է դիմելու կամ նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը նպաստ ստանալու իրավունք է ունեցել:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է մահացածի ամուսնուն կամ 14 տարեկան եւ դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային՝ անկախ նպաստառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված լինելու հանգամանքից, իսկ ընտանիքի այլ անդամին՝ եթե նա, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, նպաստառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված է եղել նույն վայրում (հասցեում): Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է նաեւ նրա օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի քաղաքային պանթեոնում տեղադրվել է երգիչ Հայկոյի արձանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____

Ազգանուն՝ _____

Առաքման հասցե՝ _____

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: